

Կ Ա Ր Գ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՍՊԱՌՈՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական ծրագրերի մշակման և իրականացման գործընթացին վերջնական սպառողի մասնակցությունն իրականացվում է սույն կարգով: Սույն կարգով բնապահպանական ծրագրեր են Հայաստանի Հանրապետության բյուջետային և հանրային հատվածների հաշվապահական հաշվառման դասակարգման «0500 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» բաժնին դասվող աշխատանքները և միջոցառումները:

2. Բնապահպանական ծրագրերը մշակվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի N 197-Ն որոշմամբ հաստատված բնապահպանական ծրագրերի մշակման (սախագծման) կարգին համապատասխան:

3. Բնապահպանական ծրագրեր իրականացնող պետական մարմիններն այդ ծրագրերի և դրանց իրականացման մասին հասարակությանն իրազեկում են՝ համապատասխան համայնքների ղեկավարներին տրամադրելով նշված ծրագրերին վերաբերող փաստաթղթերը: Բնապահպանական ծրագրերի և դրանց իրականացման մասին հասարակությունն իրազեկվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33.1-ին հոդվածի պահանջներին համապատասխան:

4. Իրազեկումն իրականացվում է՝

1) azdarar.am կայքում հրապարակային ծանուցման միջոցով.

2) ծրագրերի և նախագծերի ցուցադրման միջոցառումներով, հրապարակումներով, տեղական ինքնակառավարման մարմինների համացանցային կայքերում տեղադրմամբ.

3) հասարակական քննարկումներով:

5. Հասարակության ներկայացուցիչները «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն կազմակերպված հանրային լսումների կամ քննարկումների արդյունքներով նորմատիվ և այլ իրավական ակտերով հիմնավորված առարկությունները, առաջարկությունները, ինչպես նաև հրապարակված բնապահպանական ծրագրերի նախագծային փաստաթղթերի վերաբերյալ սեփական միջոցներով կատարված անկախ փորձաքննության եզրակացությունները գրավոր ներկայացնում են համապատասխան համայնքի ղեկավարին:

6. Սույն կարգի 4-րդ կետում նշված առարկությունները, առաջարկությունները, ինչպես նաև անկախ փորձաքննության եզրակացությունները քննարկվում են բնապահպանական ծրագրեր իրականացնող պետական մարմինների կողմից՝ դրանց ստացումից հետո մեկամսյա ժամկետում, դրանք ներկայացրած հասարակական և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

7. Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական ծրագրերի իրականացման գործընթացին վերջնական սպառողի մասնակցությունն ապահովելու նպատակով բնապահպանական ծրագրերի իրականացման արդյունքների ընդունման համար ծրագիրն իրականացնող պետական մարմնի ղեկավարի որոշմամբ ստեղծվում է տվյալ ծրագրի իրականացման արդյունքներն ընդունող հանձնաժողով, որի կազմում ներգրավվում են՝

1) այդ մարմնի և կապալառուի ներկայացուցիչները, տեխնիկական հսկողություն իրականացնող անձինք.

2) համապատասխան համայնքի աշխատակազմի ներկայացուցիչը, որի վարչական տարածքներում իրականացվում է բնապահպանական ծրագիրը.

3) տվյալ մարզում գրանցված բնապահպանության ոլորտի գծով հասարակական կազմակերպության ներկայացուցիչը (համաձայնությամբ):

8. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող բնապահպանական ծրագրերի իրագործման արդյունքներն ընդունող հանձնաժողովների կազմում լրացուցիչ ընդգրկվում է նաև համապատասխան մարզպետարանի ներկայացուցիչը:

9. Ընդունող հանձնաժողովի անդամների թիվը չպետք է գերազանցի տասը: Ընդունող հանձնաժողովի գործունեության ժամկետը սահմանվում է ծրագիրն իրականացնող պետական մարմնի ղեկավարի որոշմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ